ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

«ՀՀՌՑ-ԳՀԱՊՁԲ-18/10» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով

լուսադիոդային լամպերի ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի է ունեցել 11.04.2018թ. ժամը 12.00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝
Գնման Պատասխանատու /Գնահատման Աշխատակազմի Պատասխանատու՝ ԳՊ/ԳԱՊ/
Վ. Ավետիսյանը

Անդամներ՝
Գնման Պատասխանատու /Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ/ Բ. Ալեքսանյանը
Ա. Պողոսյանը
Գնման Պատասխանատու /Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ/՝ Ա. Պետրոսյանը
Ա. Համբարձումյանը

Հանձնաժողովի քարտուղար՝
Գնման Պատասխանատու /Մրցույթի համակարգող՝ ԳՊ/ՄՀմ/ Մ. Նիկոլյանը

1. Տեղեկություն հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին

Ընդունել ի գիտություն, որ «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲ ընկերության /ՀՀՌՑ/ կարիքների համար լուսադիոդային լամպերի ձեռքերման նպատակով ս.թ. ապրիլի 4-ին էլեկտրոնային ARMEPS համակարգով հայտարարվել է «ՀՀՌՑ-ԳՀԱՊՁԲ-18/10» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ /Ընթացակարգ/: Հայտերը բացվել են էլեկտրոնային www.armeps.am կայքի միջոցով ՀՀՌՑ-ի վարչական շենքում, ք. Երևան, Նորք, Հովսեփյան 95 հասցեում, ս.թ. ապրիլի 11-ին, ժամը 12.00-ին:

2. Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները, տվյալները

N	Մասնակցի անվանումը	էլ. փոստի հասցեն	ՀՎՀՀ
1	ՕՊՏՇԻՆ ՍՊԸ	optshin@inbox.ru	00474635
2	Էքսպրես Շին ՍՊԸ	express.shinllc@gmail.com	04423377
3	Մակրոֆուդ ՍՊԸ	makrofood@yandex.ru	00886056

3. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին

3.1 ՕՊՏՇԻՆ, Էքսպրես Շին, Մակրոֆուդ ՍՊ ընկերությունների կողմից ներկայացված հայտերում առկա են «ՀՀՌՑ-ԳՀԱՊՁԲ-18/10» ծածկագրով գնանշման հարցման հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը և համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

4. Մասնակիցների առաջարկած գները, նախահաշվային գինը

ՀՀ դրամ

N	Մասնակիցների անվանումը	1 չափաբաժին			2 չափաբաժին		
		Նախահաշվային գին՝ 364 000 ՀՀ դրամ , ներ. ԱԱՀ			Նախահաշվային գին՝ 57 000 ՀՀ դրամ , ներ. ԱԱՀ		
		արժեք	ԱԱՀ	ընդհանուր գումար	արժեք	ԱԱՀ	ընդհանուր գումար
1	ՕՊՏՇԻՆ ՍՊԸ				46000	9200	*55000**
2	Էքսպրես Շին ՍՊԸ	133672.5	26734.5	160 407	27775.0	5555.0	33 330
3	Մակրոֆուդ ՍՊԸ	100425	20085	120 510	34375	6875	41250

* ՕՊՏԵԻՆ ՍՊԸ գնային առաջարկի 5-րդ սյունակում թվերով գրված գումարը՝ 55 200 չի համապատասխանում տառերով գրված գումարին /հիսունհինգ հազար/: Հիմք ունենալով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 4-րդ մասը՝ հիմք է ընդունվում տառերով գրված գումարը:

5. <u>Հանձնաժողովը որոշեց</u>

5.1 Ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /Կարգ/ 40-րդ կետի 5-րդ ենթակետով՝

ա) 1-ին չափաբաժնով առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել Մակրոֆուդ ՍՊ ընկերությունը , երկրորդ տեղը՝ Էքսպրես Շին ՍՊԸ –ն:

բ) 2-րդ չափաբաժնով առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել Էքսպրես Շին ՍՊԸ-ն,
երկրորդ տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել Մակրոֆուդ ՍՊԸ-ն,
երրորդ տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել ՕՊՏԵԻՆ ՍՊԸ-ն

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0

5.2 Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ ՀՀ ԿԱ Պետական եկամուտների կոմիտեից կատարել հարցում՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0

5.3 Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակիցներին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ սահմանված՝ առաջարկվող ապրանքների անվանումները և տեխնիկական բնութագրերը /ամբողջական նկարագրերը/:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0

5.4 Գնահատման նիստը հրավիրել ս.թ. ապրիլի 13-ին, ժամը 16.00-ին, ՀՀ, ք. Երևան, Նորք, Հովսեփյան 95 հասցեով:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0

Հանձնաժողովի

նախագահ՝ _____ Վ. Ավետիսյան

անդամներ՝ _____ Բ. Ալեքսանյան

_____ Ա. Պողոսյան

_____ Ա. Պետրոսյան

_____ Ա. Համբարձումյան

քարտուղար՝ _____ Մ. Նիկոլյան